# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաբերդ համայնք,6-80-10.

## ՈՐՈՇՈՒՄ

« 20 » մայիսի 2020 թվականի N 13

**ՔԱՐԱԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քարաբերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (1.2-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2020 թվականի հունիսի 26-ին ժամը 11.00 –ին Փամբակի համայնքապետարանում անցկացնել մրցույթ:

2. Մրցույթի անցկացման մասին տալ հայտարարություն www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և այդ մասին երկօրյա ժամկետում տեղեկացնել Լոռու մարզպետարանի աշխատակազմին:

3. Մրցութային հանձնաժողովի լիազորված անձ նշանակել Սոնա Գուրգենյանին:

Համայնքի ղեկավար Յուրիկ. Շավելյան

20 մայիսի 2020թ.
գ.Քարաբերդ